

ՆՈՐ ՆՅՈՒԹԵՐ ԲԱՖՖՈՒ ՄԱՍԻՆ

Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի Մ. Աբեղյանի անվան Գրականության Ինստիտուտի Գրական թանգարանը Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի Գեներալկայի Ինստիտուտի ավագ գիտական աշխատակից՝ Դ. Սանթրոսյանից նվեր ստացավ վիպասան Բաֆֆու գրչին պատկանող կամ նրան վերաբերող մի շարք արխիվային նյութեր:

Ստացված փաստաթղթերի մեջ գտնվում են Բաֆֆու գրած 16 նամակները և մի քանի դիմում, որոնք ուղղված են Թավրիդի գաղութի ուսուցիչներին, Ավագ Դեռագյան Ավթանդիլյանին, Խաչատուր Տեր-Ջաքարյանին, տեղի գաղութի վարչությանը և Սալմաստի կամ Ատրպատականի հայոց հոգևոր առաջնորդին:

Բաֆֆու նամակները գրված են 1862-ից մինչև 1888 թիվը: Մի քանիսն ուղարկված են Փայաթուկից, մեկը Ագուլիսից, իսկ մնացածները՝ Թիֆլիսից:

Ստացված նյութերի մեջ կան Խ. Տ.-Ջաքարյանի 2 նամակը՝ ուղղված Բաֆֆուին, կնոջ՝ Աննա Բաֆֆու 3 նամակները, Գր. Արծրունու, Խրիմյանի և Թորոս Թորոմանյանի մեկական նամակները, ուղղված դանադան անձանց: Գան նաև Բաֆֆու Թավրիդի նախկին աշակերտների հիշողությունները, նրան գաղութից արտաքսելու հետ կապված դեպքերի մասին և մի շարք այլ նյութեր՝ նվիրված Բաֆֆու տոհմագրությանը, ընտանիքին և այլ խնդիրներին:

Բաֆֆուն պատկանող այս փաստաթղթերը արժեքավոր տեղեկություններ են պարունակում նրա գրական, մանկավարժական-հասարակական գործունեության մասին, պարզաբանում են նրա հայացքները տարսեր հարցերի վերաբերյալ:

Բաֆֆու առաջին ընդարձակ նամակը գրված է 1862 թ. մարտի 6-ին և ուղարկված է Փայաթուկից Սալմաստի կամ Ատրպատականի հոգևոր առաջնորդին:

Բաֆֆին, տեսնելով ժողովրդի ծանր վիճակը, այդ նամակում բողոքում է այն հասարակական-քաղաքական ճնշումների դեմ, որին ենթակա էր ժողովուրդը պարսկական բռնակալության պայմաններում:

Բաֆֆին գրում է.—

«Թեպետ նվաստիս վերաբերյալ գործ չէ այդպիսի իրողությանց վերա մտածել և գրել, բայց միտ ղնելով հառաջախաղաց մարդկության խորհրդի պայմաններին, ամեն ոք պարտավոր է մտածել յուր ընկերի համար և նորա անդորրությանը մի դարման տանելու հոգալ և հայտնել յուր սղոտ գաղափարքը:

Ամենևին խոհեմությունից դուրս մտածմունք է, ժողովրդի (հայ) պահպանությունը հանձնել Ասկյար խանի նման խաբեբա, ստախոս և ժողովուրդը հազար տեսակ բռնակալությանը գերփող, կողոպտող մարդին:

Ուրմիո քրիստոնյա ժողովուրդը հառաջագույն նորա չարագործությանց համար առած լինելով, երբեք չընդունեցին և չը ճանաչեցին նորան յուրյանց զլուխ և տակալին բողոքում են տերությանը նորա ընդդէմ: ... Մի այդպիսի ազգօգուտ տնօրինությունը առավել հասած կլիներ յուր բարի խորհրդին, երբ Ասկյար խանի փոխարեն նշանաւէլած կլիներ մի արժանավոր հայ մարդ:¹

Այնուհետեւ խորհուրդ է տալիս հոգ տանել ժողովրդի բարօրությանը և հիշեցնում է. — «Զ՝ը կարծեմ, մոռացած լինիք անցյալ տարւալ այն ժողովրդից կրած ըրտր անախորժությունքը, որով կարողացաք ժողովել Ձեզ պատկանյալ հողէոր պտուղը»:²

Այս տողերը և մի քանի այլ փաստեր ցույց են տալիս, որ Ռրանի հայությունը հաճախ ըմբոստացել է իրեն կառավարողների ու ճնշողների, և երբեմն էլ հողէոր պետերի դեմ:

Պարսկահայ իրականության մեջ, Րաֆֆին առաջիններից մեկն է եղել, որ արձագանքել է ժողովրդի բողոքին, իր ձեռքով գրելով նրանց զիմումները (համախոսական) և առաջինը իր ստորագրությունը գնելով այդ փաստաթղթերի տակ:

Րաֆֆին ոչ միայն այս, այլև հետագա տարիներին գրած նամակներում, երբեմն անդրադառնում է Ռրանի հայ ժողովրդի և հատկապես գյուղացիության աննախանձելի վիճակին, հետաքննաբերական հայացքներին և կենցաղին: Անցած հազարավոր տարիները նրա քարացած վիճակի մեջ ոչ մի փոփոխություն չեն առաջացրել: Րաֆֆին նկարագրում է, թե ինչպես գյուղացիները, երբ նոր տարին մոտենում է, ուրախանում են, որ իրենց հաճար նոր բախտ է բերում, հինը հալածում են հրացաններ կրակելով, հայհոյելով, անիծելով և աներեւակայելի տեսարաններ սարքելով: Նա ցավով և միևնույն ժամանակ հեղնանքով արձանագրում է. — «Վանի-քանի հազարավոր այդպիսի դեկտեմբերներ յուրյանց հրացաններով արտաքսել են հայոց ուսմիկները, քանի-քանի նոր տարիք սիրով և ուրախությամբ ընդունել են նոքա: Բայց նոցանից ոչ մինը չէ բերել նոցա համար մի նոր բախտ»:

Արդարեւ զնում է հինը, զալիս է նորը (տարին), բայց հայերը, անդարտ կենալով յուրյանց գերեզմանական անշարժության մեջ, երբեք չեն մտածում փոխել յուրյանց մեղեկային դրությունը: Հայերը յուրյանց կյանքը չեն համաձայնեցնում տարիների ընթացքի հետ, և ժամանակի պիտույքների հետ»:³

Րաֆֆին այդ գրությունից դուրս գալու միակ ելքը համարում է զիտությունը և լուսավորությունը, որը պետք է տարածվի մամուլի և գալուցների միջոցով:

Սակայն ժամանակակից գալուցներն էլ գտնվում էին նույն թշուառ վիճակում, որովհետեւ նրանց վրա էլ իշխում էին հարուստ հողարարները և խավարամիտ հողէորականները, որոնք խոչընդոտ էին հանդիսանում ամեն մի առաջադեմ լուսավոր գաղափարի:

¹ Դրական Թանգարան, Րաֆֆու աթիւի:

² Նույն տեղում:

³ Նույն տեղում:

Հետագայում, երբ Ռաֆֆին առիթ է ունեցել հաճախակի լինելու Թիֆլիսում, համեմատություն մեջ է դրել այնտեղի և Բրանի ժողովրդի կուլտուրական կյանքը, միջավայրը, նա տեսել է այն խոշոր հակասությունը, որ գոյություն ունի երկու երկրների միջև: 1868 թ. կրկին անգամ այցելելով Թիֆլիս, Ռաֆֆին հիացել, հրապուրվել է նրանով—«Այնտեղ կարելի է գտնել այն ամենը, ինչ որ կարող է գրավել մեր խելքը, միտքը և սիրտը: Նա հիացմունքով է արահայտվել ուսումնական, կարող, աշխույժ այն երիտասարդության մասին, որի շրջապատում ինքն իրեն երջանիկ է դրացել:

Ռաֆֆին Թիֆլիսում լինելով «Մշակ»-ի գլխավոր աշխատակիցներից մեկը, կարևոր գործ է կատարել ոչ միայն գրականության համար, այլև մասնավոր է Բրանի հայության հասարակական-քաղաքական և կուլտուրական վիճակով: Ռաֆֆին Թավրիզի ուսուցիչներից մեկին, որը միևնույն ժամանակ «Մշակ»-ի աշխատակիցն էր, Ավագ Գևորյան Ավթանդիլյանին 1872 թ. օգոստոսի 4-ին դրում և խորհուրդ է տալիս ուղարկել նյութեր Բրանի կյանքից՝ «Մշակ»-ում տպելու համար: «Պարսկաստանը լի է առօրյա հետաքրքրական անցքերով, որոնց մասին ոչ մի պարբերական հրատարակություն չէ խոսում. Ինչքան չեն լինում դիվանխանաներում, ինչքան չեն լինում շարյաթխանաներում, ինչքան չեն գործում նահանգների հաքիմներն ու մուլքատարներն և ինչքան չէ անում վերջապես մեր Ատրպատականի հոգևոր կառավարությունը: Այն բոլոր անկարգություններն, որ պատահում են այս տեղերում, միշտ առատ նյութեր կարող են լինել լրագրության համար: Ռաֆֆին, իր պատվերի համաձայն, երբեմն ստանալով նման բնույթի հոդվածներ, տպել է «Մշակ»-ում. ինչպես, օրինակ՝ Թավրիզի հոգևոր առաջնորդի դեմ եղած խռովությունների մասին ուղարկած հոդվածը և շատ այլ թղթակցություններ:

Ռաֆֆին շարունակ մտածելով իր հայրենակիցների բարօրություն մասին, արել է այն ամենը, ինչ որ կարողացել է Տեղեկություն ստանալով, որ Թավրիզում ինչ որ շարժում կա, այն է՝ օրիորդաց դպրոց, թատրոն և այլն, հերախանում և միևնույն ժամանակ զարմանում է, թե ինչպես կարող են ներկայացում տալ այնպիսի մարդիկ, որոնք իրենց կյանքում թատրոն չեն տեսել: Հետագայում կրկին անդրադառնալով կուլտուրական այդ կարևոր հարցին, դրում է.—«Ուրախ եմ, որ տեղիւյժ թատրոնական ներկայացումները հաջող են գնում, որպես նոր բան, թատրոնը այնտեղ (Թավրիզում) շատերին կարող է հետաքրքրել, և այդ գործը կարելի է այն աստիճան ընդարձակել, որ վերջը, բացի բարեգործական նպատակների ծառայելուց, ապրուստի և շահի աղբյուր դառնա դերասանների համար. Այդ պատճառով վատ չէր լինի, եթե բեմական ձիրք ունեցող երիտասարդներից մի քանի հոգի գային Թիֆլիս և մտնելով այնտեղի թատրոնական խումբի մեջ, վարժվեին և կատարելագործեին իրանց տաղանդը:»

Ռաֆֆին առանձնապես հետաքրքրվել է Իրանում գտնվող հայկական դպրոցների վիճակով, և աշխատել է թե խորհուրդներով և թե անձնական օրինակով օժանդակել նրա բարելավմանը: Այդ բոլորն անելու համար նա

1 Գրական Թանգարան, Ռաֆֆու արխիվ:

2 Նույն տեղում.

ենթարկվել է անասելի հալածանքների, սակայն չի հուսահատվել. Նա 1877 թ. նոյեմբերի 3-ին Ազուլիսից Թավրիզ ուղարկած նամակներից մեկում մեծ անդրադառնալով Թավրիզի հայկական դպրոցի վիճակին, գրում է. — «Դպրոցի այժմյան դրությունը ինձ շատ հետաքրքրում է: Աշխատեցեք, եղբայր, խնամք տանել դպրոցի բարվոքմանը, ոչ միայն իբրև վարժապետ, այլև որպես աղնավ հայ, որ ճանաչում է, թե ինչ կարևորություն ունի ահագին դաստիարակությունը: Խավարասերներ խոչընդոտներ թող չվհատեցնեն Ձեզ, — խավարասերն ամեն տեղ լուսո գեմ պատերազմում է, բայց ճշմարիտ աղմուկների եռանդը թուլացնել չէ կարողանում...

Ձերտեմ, ինչպես վերջացան ինձանից հետո տեղվույդ խոսովություններն, մի քանի տեղեկություններ ինձ գրած էին, բայց լիակատար բավականություն չտվեցին իմ հարցասիրությանը: Կցանկանայի, որ խոսվարարներն մինչև այժմ հանգստացած լինեին իրենց չար կրքերից, որ պատիվ չէ բերում Թավրիզի հասարակությանը. և մանավանդ կործանման անդունդ է բացում ամենի առջև...

Ես ներում եմ, և աշխատում եմ մոռանալ այն բոլոր անիրավությունքը, որով վարվեցան ինձ հետ իմ թշնամիքը... Հուզան միայն հավիտենական դատապարտությունը վարձ ստացավ յուր գործի համար, — այսպես են բոլոր մատնիչներն...

Բաֆֆին Թիֆլիսում եղած ժամանակ, ստանալով Թավրիզի ուսուցիչներից մեկի՝ Հ. Գարապետյանի հուսահատ նամակները, տեղի դպրոցի և ուսուցչության վիճակի մասին, հույս է տալիս, որ ինքը շուտով կգա և կրարվոքի դրությունը: 1875 թ. գնալով Թավրիզ, որպես ուսուցիչ ընդունվում է տեղի Արամյան դպրոցը, որը ենթարկված էր հարուստ և խավարամիտ հոգաբարձուների քմահաճույքին: Ձհանդուրժելով նման դրությունը, Բաֆֆին մերկացնող թղթակցություններ է ուղարկում «Մշակ»-ին: Նրա թշնամիները թարգմանել են տալիս նրա հողվածները և շահի մոտ Բաֆֆուն ներկայացնում են որպես խոսվարարի:

Բաֆֆու մի շարք նամակներից և այդ ժամանակվա իր աշակերտների հետադա պատմած հուշերից պարզվում է, թե ինչպիսի սարսափելի վիճակի մեջ է եղել Բաֆֆին 1876 թվին: Ականատեսներից մի քանիսի վկայությունից երևում է, որ նրա գործունեության շուրջը խտրիզներ են լարել թե հոգաբարձուները և թե խաները: Նրանք շատ անգամ դիմել են տեսչին և առաջարկել վտարել Բաֆֆուն դպրոցից, որն աշակերտության սիրելին էր և վայելում էր ժողովրդի համակրանքը: Տեսուչը մի քանի անգամ կարողանում է մի կերպ փոթորիկը հեռացնել: Ի վերջո մի օր պայթում է նա: Բաֆֆու թշնամիները, 10—12 հոգուց բաղկացած խմբով խուժում են դասարան, դասի ժամանակ աշակերտների ներկայությամբ բարբարոսաբար, բռնի միջոցներ գործադրելով, դուրս են քաշում Բաֆֆուն: Վերջինս ստիպված է լինում փախչել: Որոշ ժամանակ թափառական կյանք վարելով, զաղտնի անցնում է սահմանը և ապաստան գտնում իր սիրած միջավայրում՝ Թիֆլիսում: Այդ ժամանակվա դեպքերին նա անդրադարձել է իր մի քանի նամակում, որից արժե հիշատակել Ազուլիսից 1877 թ. նոյեմբերի 3-ին ուղարկած նամակը, որի մեջ գրում է. — «Դիտեմ, Ձեզ ցան-

¹ Երական Թանգարան, Բաֆֆու արխիվ:

կալի կլինի լսել իմ Պարսկաստանից դուրս դալեն հետո վարած թափառական կյանքը, ուրեմն դրեմ:— Դեռ Թիֆլիս չհասած, քարեկամներիս հայտնի էին այն բոլոր անիրավ անցքերը, որ անցան ինձ հետ Թավրիզում. ամենը համարում էին ինձ կորած... Բոլորը նայում էին ինձ վերա, որպես մի Ղազարոսի, որ նոր է վերադարձել զերեզմանից...

Թիֆլիսում ես մնացի մի ամբողջ ամիս, այս մի ամիսը անցավ, որպես մի քանի րոպե. ամեն տեղ սեր և համակրություն էի ստանում ծանոթներից: Վերադառնալիս խմբագրություն մեջ արդեն բացվել էր ինձ համար մի տեղ, որովհետև պարոն Աղայանը զննացած լինելով Երեան, նրա պաշտոնը կատարող չկար. բացի դրանից Ներսեսյանը դպրոցում դասեր առաջարկեցին: Բայց ես չկամեցա Թիֆլիսում մնալ, երբ Ազուլիսի հոգաբարձությունից հրավեր ստացա: Ինձ վաղուց սիրելի էր հեռու մնալ քաղաքի աղմկալի կյանքից և գյուղական պարզ ու խաղաղ մի անկյունի մեջ ապրել:— Այստեղ կարող եմ մի փոքր ինչ շունչ քաշել և հանգստանալ անցյալ հոգնածությունից:¹

Անուհետև նկարագրում է տեղի դպրոցների, ժողովրդի վիճակը և իր զրադմուսները. «Եվ այսպես, ես ամեն օր կեսօրից հետո ազատ ժամեր ունիմ իմ առանձին գրավոր աշխատություններիս գրադվելու, որոնց մեջ գտնում եմ իմ գլխավոր միտքարությունը»²

Ռաֆֆին իր ուղարկած նամակների մեջ հաճախակի խոսում է իր զրական աշխատանքների, նրանց մեջ կատարած փոփոխությունների, տպագրություն, տարածման և ընթերցողների կողմից արժանացած վերաբերմունքի մասին: Վերոհիշյալ հարցերի կապակցությամբ Ավթանդիլյանին գրում է. «Դուք արդեն ՎՇակա-ի մեջ կարդացած կլինեք, որ առաջիկա տարվանից (1880 թ.), կսկսի տպվել իմ մի վեպը՝ «Կայծեր» անունով: Այստեղ և գավառներում զանազան պարոններ ստորագրություն են հավաքում տպագրության համար: Առաջին անգամ է, որ մեր հասարակությունը սկսում է համակրել և նպաստել զրականությանը: Բա. ուրախալի երևույթ է:

«Կայծեր»-ը նույն աշխատությունն է, որի մի մասը դուք հանձն առաք արտադրել, բայց վերջին ժամանակներում ես շատ փոփոխություններ արեցի, բայց որքան հիշում եմ, նրա մի նաղառն մնացած պետք է լինի Ձեզ մոտ, որովհետև թերթերիս մեջ չէ երևում: Խնդրում եմ որնիցե եկվորի ձեռքով ուղարկել:

Դուք զգուշ մարդ եք, չեմ կարծում, որ կորցրած կամ ոչնչացրած լինեք»³

Մի այլ նամակից երևում է, թե «Խենթ»-ը ինչպիսի ընդունելության է արժանացել ընթերցող հասարակության կողմից. «Գրում եք, «Խենթ»-ը Թավրիզում հետաքրքրությամբ է կարդացվում: Ամեն գավառներից ստանում եմ այս տեսակ տեղեկություն: Երկու պարոններ ինձանից թույլտվություն ստացան այս վեպը թարգմանել ռուսաց լեզվով: Տեսնե՞ք Կ. Պոլսի հոսոսները այդ բոլորը կարդալուց հետո խելքի կզան, թե ոչ: Բայց ջա-

¹ Կրական թանգարան՝ Ռաֆֆու արխիվ:

² Նույն անգում:

³ Նույն անգում:

վում եմ, որ շատ տեղեր ցենզուրայից չանցավ՝ (նամակ, 1880, թ. 18/4, Թիֆլիս):

Բաֆֆուն վերաբերող մի այլ փաստաթղթից տեղեկանում ենք նրա «Ջալալեդին» աշխատության սկզբնաղբյուրների մասին: 1877 թվին Բաֆֆին Ապուլիսից գալիս է Զուլֆա, ընտանիքը Իրանից Թիֆլիս տեղափոխելու համար: Նա այնտեղ հանդիպում է բազմաթիվ հայ զաղթականների, որոնք ոռոս տաճկական պատերազմի հետևանքով, ստիպված են եղել ապաստան որոնել օտար երկրներում: Բաֆֆին այդ զաղթականներից մանրամասնություններ է գրի առնում, Շեյխ Ջալալեդինի արշավանքների մասին և հետագայում գրում է համանուն վեպը:

1868 թ., երբ Բաֆֆին գտնվում էր Թիֆլիսում, Թավրիզ, մտերիմներից մեկին ուղարկած նամակում խոսում է, իր առաջին աշխատության, «Քլիլիկ»-ի (ձեռագիր) ունեցած հաջողության և այն միջավայրի մասին, որի մեջ գտնվում է ինքը: «Ես ունեմ այժմ մի նախանձելի շրջանակ՝ այստեղի ուսումնական և կարի աշխույժ երիտասարդներից: Իմ «Քլիլիկ»-ը զարմանալի ընդունելություն գտավ տեղիս ընթերցող հասարակությունն, քանի քանի գիշերներ եղել են առանձին-առանձին ժողովքներ նորա ընթերցանության համար»² և դեռ շատերն են ցանկացել կարդալ:

Բաֆֆու այդ նույն աշխատության լուրը հասնելով Մոսկվա, Ստ. Նազարյանին, ցանկացել է տպել իր «Հապտեր Հայաստանի» օրագրում, որը նա մտադիր էր հրատարակել այդ ժամանակ: Նազարյանը նամակ է գրել Բաֆֆուն և խնդրել է ուղարկել աշխատությունը: Վերջինս մտադրություն է ունեցել կատարելու նրա ցանկությունը, սակայն ուշացրել է և դրա պատճառը եղել է այն, որ շատերն են ցանկացել կարդալ այն:

Արդյոք Բաֆֆին ուղարկել է իր այդ աշխատությունը Ստ. Նազարյանին, առայժմ պարզ չէ, սակայն մի բան հայտնի է, որ Նազարյանի մտահղացումը՝ «Հապտեր Հայաստանին» լույս աշխարհ չի եկել և մի գուցե «Քլիլիկ»-ի հրատարակության հարցն էլ կապվելով նրա հետ, որպես առանձին աշխատություն, մնացել է անտիպ:

Բաֆֆին հետագայում հիմնական փոփոխության ենթարկելով և մշակելով «Քլիլիկ»-ը, մտցրել է այն իր «Սալրի»-ի առաջին հատորի մեջ, իսկ նախնական վարիանտի մաքրագրից պահպանվել է իր հիմնական արխիվում—ըստ Աննա Բաֆֆու տված տեղեկության:

Բաֆֆին կապված է եղել «Հյուսիսափայլ»-ի և նրա աշխատակիցների հետ սերտ կերպով և ջերմ սիրով: Նա իր «Աղթամարա վանքը» վերնագրով ճանապարհորդական տպավորություններն ուղարկել է «Հյուսիսափայլ»-ի խմբագրին, որը հավանելով տպել է այն 1860 թվի նոյեմբեր ամսի №-ում, նրա հետ նաև հանրահայտնի «Ձայն տուր ով ծովակ»-ը, որը գրել է 1857 թվին Աղթամար կղզու մի քարի վրա նստած: Հետագայում Բաֆֆին արդեն նամակագրություն է ունեցել Նազարյանի հետ, որի մասին նա հիշատակում է իր նամակներից մեկում:

Ստացված նամակներից ամենից ուշագրավը և արժեքավորը այն նամակներն են, որոնց մեջ Բաֆֆին խոսում է Միքայել Նալբանդյանի մասին՝ նրա մահվան կապակցությամբ մամուլում եղած արձագանքների առիթով:

¹ Գրական Թանգարան, Բաֆֆու արխիվ:

² Նույն տեղում:

Նամակներից առաջինը գրված է [1868 թ.] հունվարի 1-ին, ուղարկված է Փայաջուկից Թավրիզ — ռուսացիչ Ավագ Գեորգյան Ավթանդիլյանին, Այդ նամակում Ռաֆֆին գրում է ռուսացարավոր Մ. Նալբանդյանցի ցավալի կյանքը և նորա սգավոր մահը նկարագրող լրագիրը անհամբերությամբ սպասում եմ ստանալ, որ և անհապաղ ետ կղարձուցանեմ:¹

Հաջորդ նամակից (1868 թ. հունվարի 29, Փայաջուկ) պարզվում է, որ ստանալով իրեն հետաքրքրող թերթը, դժգոհ է մնացել նրա բովանդակությունից և գրել է Մ. Նալբանդյանի հասցեին արժանի ջերմ խոսքեր — «Այս դասիտով ստացա Ձեր մի քանի տող պրուքյունը, մի քանի հատ Մասիսի թերթերից, այլև «Ծաղիկ» կիսամսագիրը, որոյ մեջ կարդացի պարոն Մ. Նալբանդյանցի մահը: Այս հատվածը այնքան պոնցուցիչ չէր, ազդային այդ թանկագին Ջոնի ցավալի մահը նկարագրելու համար՝ հոշակավոր Հյուկոյի գրիչն պետք է, և Ապովյանի վառված, կրակված սիրտն: Միթե՞ այդքան կարճ պետք է խոսել այն տղամարդի մասին, որ այսքան երկար և սրտաշարժ ոճով՝ խոսեցել է մեր ազգային պիտույքների մասին: «Ծաղիկն» այս գրով կստանաք: Մի մոռացեք իմ շնորհակալությունն պարոն էլիկյուզելյանցին հիշելու, յուր կիսամսագիրն մեզ ուղարկելն ընդունելու մասին: Բուք գրած էիք, թե պարոն Նալբանդյանցի լուսանկար պատկերը հիշյալ պարոնի մոտ տեսած եք, բայց ինչ եղավ Ձեր Պոլսուց գրել սկսած հանդուցելոյ պատկերն: Արժանապատիվ Մոսյո Թովմասի խոստմունքներն հավիտենականության կարոտություն ունեն, բեր այդքան համբերություն: Լավ է, որ դուք Ձեր այժմյան ծանոթ պարոն էլիկյուզելյանի միջնորդությամբ բերել տաք իմ և Ձեր խնդրած պատկերներն:²

Այս տողերից երևում է, որ Նալբանդյանի անունը և համայքը տարածված էր ոչ միայն Կովկասում, Ռուսաստանում, Պոլսում, այլև Իրանի ետ ընկած մի անկյունում: Գաղութի հայ ինտելիգենցիան հարգում և մեծարում էր Նալբանդյանին և աշխատում էին ձեռք բերել նրա նկարը, որի անունը հռչակվել էր ամենուրեք:

Ռաֆֆու գրած նամակներից և այլ նյութերից երևում է, որ նա խորին հարգանքով է վերաբերվել Նալբանդյանին և պատահական չէ, որ իր անդրանիկ աշխատությունը՝ «Սալբին», նվիրել է նրան հետևյալ ընծայականով. —

«Ամուսնի Մ. Նալբանդյանցի միշտ օրհնյալ հիշատակին՝ խորին մեծարանքով նվեր».

Ինչ քաղցր է այդ պաշտելի տղամարդի հավիտենական հիշատակը հարգել՝ իմ աշխատությանց երախայրիքը նորան ընծայելով: Թեպետ «Սալբին»-ի հեղինակը չէ ունեցել պատվելի հանդուցելո հետ խիստ մոտավոր ծանոթություն, բայց քանի կա և կապրի հայոց լեզուն և գրականությունը, Մ. Նալբանդյանցի անմահ հիշատակը միշտ կունենա յուր դպրի համակրությունքը ամեն մի հայի սրտում, մինչև դարերի վերջը:

Սալմաստ, 1867 թ.

Հեղինակ

Ռաֆֆու այս տողերը մոռածելու առիթ են տալիս, արդյոք նա անձամբ ծանոթ եղել է Նալբանդյանին թե ոչ, կամ գրավոր կապ ունեցել է

¹ Դրական Թանգարան, Ռաֆֆու արխիվ:

² Նույն տեղում:

³ Ռաֆֆի. «Երկերի ժողովածու», հատոր II, Երևան, 1950 թ.

ներա հետ: Այս հարցերը չաա կարեւոր և միեւնոյն ժամանակ անհավանական չեն թվում: Այլապես ինչով բացատրել «Մալրի» ընծայականի մեջ տեղ գտած «խիստ մոտավոր ծանոթութիւն» բառերը, «Սալրին» նրա հիշատակին նվիրելը, և վերջապես իր ցանկութիւնը — Նալբանդյանի կենսագրութիւնը գրելու մասին:

Այս վերջին փաստին մենք իրազեկ ենք դառնում մի այլ փաստաթղթից, որը պահպանվում է Կրական թանգարանի մի այլ ֆոնդում:

1887 թ. մարտի 25-ին Թիֆլիսից Կ. Մարտիրոսյանը գրում է մի նամակ Մոսկվայի Հազարյան ճեմարանի ուսուցիչ՝ Խաչատուր (Քուչուկ) Հովհաննիսյանին, որի մեջ հայտնում է իրենց կողմից Նալբանդյանի երկերի հրատարակութեան նախապատրաստութեան և այդ առթիւ սուղ եկող խոջընդոտների մասին, նշում է, որ 1-ին հատորում տրվելիք Մ. Նալբանդյանի կենսագրութիւնը գրելու ցանկութիւնն է հայտնել տաղանդավոր հայ վրպասան Բաֆֆին:

Այս հանգամանքը մի անգամ ևս ասպնդուցում է այն, որ Բաֆֆին մինչև իր մահը եղել է Նալբանդյանի ջերմ երկրպագուն:

Արդյոք Բաֆֆին ձեռնամուխ եղել է այդ գործին, հայտնի չէ: Հայտնի է, որ ցարական ժանդարմերի և Բաֆֆու տունը խուզարկութիւն կատարելու ժամանակ, հափշտակել, տարել է Բաֆֆուն պատկանող այն նյութերը, որոնք կասկած են հարուցել և անհավանական չէ, որ Նալբանդյանին վերաբերող նյութերն էլ մյուս փաստաթղթերի հետ տարված լինեն:

Որ Բաֆֆու տանը եղել է խուզարկութիւն, այդ բանը մենք իմանում ենք նրա մի նամակից, որը գրված է 1887 թվի օգոստոսի 18-ին, ուղարկված Թավրիդի ուսուցիչ՝ Խ. Տ. Զաքարյանին, «Կայծեր»-ը Թավրիդի բաժանորդներին ուղարկելու ուղացնելու կապակցութեամբ: Նա գրում է. «Եթե մինչև գալոց փոշտի օրը չգա և չուղարկեցի, կնշանակե, որ իմ մոտ խուզարկութիւն եղած ժամանակ, մյուս թղթերիս հետ տարած ենք»¹

Բաֆֆու հիշատակած փաստը արձանագրում ենք ուղադրութիւն հրավիրելու և համապատասխան որոնումներ ձեռնարկելու նպատակով, որը կարող է արդյունավետ լինել և որոշ խնդիրներ պարզել:

Կրական թանգարանում եղած մի այլ նամակից պարզվում է Բաֆֆու հիվանդութեան, մահվան և թաղման մանրամասնութիւնները, որի մեջ ի միջի այլոց նամակագիրը հիշատակում է, որ նրա մահից անմիջապես հետո, սուներ հավաքված նրա բարեկամները, կնոջ հետ միասին, ժողովելով նրա բոլոր ձեռագրերը, կնքել են տալիս, և անվթար պահում մնացած արխիվը: Անհա Բաֆֆին, ամուսնու մահից հետո զբաղվել է նրանց հրատարակութեան գործով:

Զեռքի տակ եղած մի այլ գրավոր աղբյուրից երևում է, որ Անհա Բաֆֆին Լոնդոնում ապրած ժամանակ գրել է ընդարձակ հուշեր ամուսնու կյանքի և գործունեութեան մասին:

Կրական թանգարանում հավաքված այս սակավաթիւ, սակայն արժեքավոր նյութերը կարեւոր տեղեկութիւն կարող են տալ Բաֆֆու կյանքով և գործունեութեամբ զբաղվող մեր գրականագետներին:

Դ. ԱՋՆԱՎՈՒՐՅԱՆ

¹ Կրական թանգարան, Բաֆֆու արխիւ: